

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Տարեգրան 1931 — 1932

Նիս և. (8 յունիս 1931)

Նախագահութեամբ Տեղապահ Սրբ. Հօր

Օրակարգ.— Ընթերցում պատրիարքական ընտրութեան վերաբերեալ 2 յունիս 1931 հառափարական արտօնագրին:

Ընթացք.— Ատեանը բացուեցաւ Նախագահ Սրբազանին աղօթքով:

Նախորդ Ատենապետներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած ըլլալով՝ Ա. Ատենապետ ընտրուեցաւ Տիրան Վրդ. Ներսիսեան, եւ Բ. Ատենապետ՝ Նորայր Վրդ. Պօղարեան:

Նախագահ Սրբազանը տնտեսութիւն մ'ըրաւ ցարդ ընտրութեան գործին շուրջ կատարուած պաշտօնական գործողութեանց շուրջ, եւ կարգաց Միաբանական Ընդհ. Ժողովին 25 դեկտ. 1930-ի Նիստին (տե՛ս ՍԻՌԸ Թիւ 2, 1931) որոշմանց հառափարակեան ներկայացման պաշտօնագիրը:

Ապա կարգաց նաեւ 28 մայիս 1931-ին իր — Նորին Սրբազնութեան — կողմէ հառափարակեան մատուցուած զիլը, որով կը խնդրուէր փութացնել ընտրութեան կանոններուն արտօնագիրը:

Ասիկէ ետք կարգացուեցաւ 1931 յունիս 2 թուակիր հետեւեալ կառավարական պաշտօնագիրը, որով պատրիարքական ընտրութեան փոփոխուած կանոններուն գործադրութիւնը կ'արտօնուէր:

(Թարգմանութիւն)

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱՏՈՒՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Թիւ 7723-19-9

2 յունիս 1931

Ձեռք Սրբազնութիւն,

Պատիւ ունիմ տեղեկացնել Ձեզ, թէ Արտաքին Դաւանք Նախարարը կ'ընդունի որ երուսաղէմի Հայոց Նոր Պատրիարքի ընտրութիւնը կատարուի Միաբանական Ընդհանուր Ժողովոյ 19 յունիս 1930 եւ 25 դեկտեմբեր 1930 Նիստերու որոշումներուն համաձայն: Ընտրութեան արդիւնքը հաղորդուելու է այս Պաշտօնատան, որպէսզի կարգադրութիւններ ըլլան ընտրուած Պատրիարքին տնտէսը վեհափառ Թագաւորին ներկայացնելու՝ վերջնական հաստատութեան համար:

Պատիւ ունիմ ըլլալու Ձեր Սրբազնութեան հնազանդ ծառան
(Աստղագրութիւն)
ՍՈՒԼՄԱՆ

Տեղակալ երուսաղէմի Կառավարչութեան Նորին Սրբազնութիւն,

Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ԵՊՍ. ՆԵԱՆԵԱՆ

Տեղապահ Հայոց Պատրիարքութեան

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ատենապետ Ժողովին կողմէ խորին շնորհակալութիւն յայտնեց Գերաշնորհ Տեղապահին՝ ընտրական այս գործին մէջ Նորին Սրբազնութեան իմաստութեամբ եւ Ս. Եկեղեցւոյն շահներուն նախանձախնդրութեամբ կատարած աշխատանքներուն համար:

Ապա, յետ խորհրդակցութեանց, Ժողովը որոշեց, Նախագահ Սրբազանի առաջարկութեամբ, հնգանուն ցանկի կազմութեան առաջ Գեր. Տ. Թորգոմ Սրբազանը Ս. Ուխտին Միաբան հոյակիկ եւ հրաւիրել, Հնգանունի կազմութեան առաջ Տ. Թորգոմ Սրբազանի Միաբանակցութեան կոչուելիք որոշուելէ ետք՝ քուէարկուեցաւ հոյակումը, որ միամայնութեամբ կատարուեցաւ:

Յետոյ խմբագրուեցաւ հրաւիրագիրը, եւ անոր ներփակել որոշուեցաւ Նախին Պատրիարք Դուբան Սրբազանին կողմէ արուած միաբանակցութեան խոստանագիրը, որպէսզի ըստ այնմ Տ. Թորգոմ Սրբազան տայ իրենը:

Նիս Բ. (15 յունիս 1931)

Նախագահութեամբ Տեղապահ Սրբ. Հօր

Օրակարգ.— Ա. Ընթերցում Տ. Թորգոմ Սրբ. Արքեպիսկոպոսի խոստանագրին:

Բ. Կազմութիւն պատրիարքական ընտրութեան հնգանուն ցանկին:

Ընթացք.— Ատենը բացուեցաւ Նախագահ Սրբազանի աղօթքով:

Նախ կարդացուեցան ա. Տ. Տիրան Վարդապետի երեք մասնաժողովներէ հրաժարականը. եւ բ. Տեղապահ Սրբազանի պատրիարքական թեկնածութենէ հրաժարականը:

1. Ապա կարդացուեցան Տ. Թորգոմ Սրբ. Արքեպիս. Ն. Սրբազնութեան ուղղուած հեռագիրն ու նամակը՝ ի պատասխան Միաբ. Ընդհ. Ժողովի կողմէ եղած միաբանակցութեան հրաւիրին: — Հետեւեալներն են այդ հեռագրին եւ նամակին պատճէնները:—

(Թարգմանութիւն)

10 յունիս, ժամ 6.56

Գերաւան

ՏՆՂԱՊԱՆՆ ԿԵՍԻՊՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարքական Հայոց

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Յարգալից շնորհակալութիւններ Ձեր նախագահութեամբ զուարուած Ընդհ. Ժողովին այն մեծ պատիւին համար, զոր լրած է, ընդունելով զիս Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամաց մէջ, որուն յաջորդեան համար աղօթող եմ ջերմապէս:

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԲԻՍԿՈՊՈՍ

(Պատճէն)

Դեմիւրի, 11 յունիս 1931

Գերաւան

Տ. ԿԵՍԻՊՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵԱՆԵԱՆ

Տեղապահ Առաքելական Ս. Աթոռոյ եւ Նիսի. Միաբան. Ժողովոյն Ս. Յակոբեանց Վանուց յԵՐՈՒՍԱՂԷՄ

Գերաւան Ս. Եղբայր ի Քրիստոս,

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանուց Միաբանական Պատկառելի Ժողովը իրեն անդամակցութեան կոչ-

չելու պատիւն ունի էր ինձի, ինչպէս հասած էիք հա-
ղորդել ինձ նախ քան ինչ որ ամսոյ 3 թուական հե-
ռադիոյ եւ ապա յունիս 9 թուականի պատշաճօրէն:

Ս. Տեղեացող եւ Հայ-Երուսաղէմի բազմաթիւ տա-
մարտիկներու առիթով մասնաւոր տեղեկութիւններով Ս.
Արքեպիսկոպոս Երուսաղէմի վիճակին, զերմեղեմ
համակիր, նոյնպէս, հոգեւոր եւ ազգային այն բարձր
աղիքին՝ որով միջոցաւ առաջարկուեց իրականացնել
Հասարակական մրցութիւնը, եւ ստացան նախաձեռ-
նողի, նմանապէս, եկեղեցական կրթութեան եւ կրո-
նական գրականութեան զեղեղիկ այն շարժումը, զոր
անմահ հոգիի մը սէր վերահսկողն էր կազմակերպեց
հոն իրապէս, կր փութած, ինչպէս ձեռք բերուեցաւ
հետազոտել ի պատասխան, հետազոտել մը զանազան էի
զգացնել, շնորհակալութեամբ ընդունել Ս. Մակարեան
Միաբանութեան այդ սիրայի հրաւերը, յոյսով առնե-
լով հաւատարմաբար ծառայել Ս. Արքեպիսկոպոսին՝
իմ կազմակերպութեան կանոններուն:

Եղբայրական սիրով եւ յարգանքով
Մեծի Սրբաբանի
Առաջնորդ Հայոց Եպիսկոպոսի
ԹՈՐՈՒՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ

Նախագահ Սրբազանը իր խնդակցութիւնը յայտ-
նեց Միաբանութեան՝ Տ. Թորոսի մը. Արքեպիսկոպոսի
կողմէ միաբանակցութեան հրաւերին ընդունուած
ըլլալուն համար:

2. Անցնելով Օրակարգի Բ. մասին՝ ձեռնարկուե-
ցաւ պատրիարքական ընտրելիքի հնգանուն ջանքի
կազմութեան, որ տուաւ հետեւեալ արդիւնքը. —

Տ. Թորոսի Ս. Արքեպիսկոպոս	38	Բաւ
Տ. Մկրտիչ Ս. Նաւ.	19	»
Տ. Յարութիւն Վարդապետ	16	»
Տ. Սմբատ Ս. Նաւ.	13	»
Տ. Ներսէս Վարդապետ	11	»

Նիստը փակուեցաւ յաջորդ օր վերստին գումար-
ութելու համար:

Նիստ Գ. (յունիս 16)

Նախագահութեամբ Տեղապահ Սրբ. Հօր

Օրակարգ. — Ընտրութիւն Պատրիարքի Առաք. Ս. Արքեպիսկոպոս Երուսաղէմի, ընտրելիքի հնգանուն ջանքին վրայէն:

Ընթացք. — Առեւտրի բացուեցաւ Նախագահ Սրբ. Բազանի աղօթքով:

Ձեռնարկուեցաւ ընտրութեան՝ եւ Երուսաղէմի Առաք. Ս. Արքեպիսկոպոս Պատրիարք ընտրուեցաւ Գեր. Տ. Թորոսի Սրբ. Արքեպիսկոպոս Գրականութեան 34 թուակով:

(Քուէներուն 5-ը ձեռնարկուեցին, եւ 2-ը Տեղապահ Տ. Մեսրոպ Նաւ. ին տրուած էին՝ հակառակ Նորին Սրբազանութեան կանխաւ հրաժարած ըլլալուն):

Սիւնիի ներքին երգութիւնն եւ աղօթքը եւ մարտնչու-
նքը ըլլալէն ետքը առեւտրի փակուեցաւ:

ԳԻՐԱՆ
ՄԻԱՐ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ՏԵՂԱԳԱՀ ՄԵՍՐՈՊ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՀԵՌԱՊԵՐԻՆ ՈՒ ՆԱՄԱԿԸ

(Թարգմանութիւն)

Թիւ 11023/15

16 յունիս, 1931

ԹՈՐՈՒՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ

Առաջնորդարան Հայոց

Փողոց Ռէճ Նաւի,

ԳԱԶԻՐԻ

Միաբանական Ընդհանուր Ժողովը ընտրեց Տե-
րապետութիւնը Երուսաղէմի Պատրիարք: Մենք եւ
Միաբանութիւնը կ'ողջենք զերմեղեմի մարտնչութեան
անկեղծ խնդակցութիւնները:

Տեղապահ
ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՍՈՍ

(Պատմել)

11040-15

17 յունիս, 1931

Առեւտրական

ՏԵՂԱԳԱՀ Ս. ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ

Բաւելանաւ Առաջնորդ Հայոց Եպիսկոպոսի

ԳԱԶԻՐԻ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Նախ քան իմ Միաբանական Ընդհանուր Ժողովը
ամսոյ 15-ին, Երուսաղէմի, 40 անգամայն մաս-
նակցութեամբ եւ մեր նախագահութեամբ ճիշտ գումար-
էնով, Բիւրանական Կառավարութեան կողմէ ընդուն-
ուած եւ զորմարտիկներ արտօնուած Ազգային Սո-
ցիալական Երուսաղէմի Պատրիարքական ընտրու-
թեան վերաբերեալ չորս բաւելանալ յօդուածներու 21
եւ 23 յօդուածներուն համաձայն ձեռնարկեց Պատրի-
արքական Ընտրութեան, եւ զառնիք Բաւելանայի
Պատրիարքական ընտրելիքի Հնգանուն ջանքը կազմեց
հետեւեալ կերպով.

1. Տե՛ր Թորոսի Արքեպիսկոպոս Գրականութեան	38	Բաւ
2. Տե՛ր Մկրտիչ Եպիսկոպոս Աղանունի	19	»
3. Տե՛ր Յարութիւն Վարդապետ Պատմական	16	»
4. Տե՛ր Սմբատ Եպիսկոպոս Գաղապետ	13	»
5. Տե՛ր Ներսէս Վարդապետ Թարգման	11	»

Բաւելանայի այս արդիւնքը նոյն օրն իսկ հետագրով
հաղորդեցինք Տե՛ր Ամենապատմական:

Յաջորդ օրը, ամսոյ 16-ին, Երուսաղէմի, Միաբա-
նական Ընդհանուր Ժողովն իր 41 անգամներու մաս-
նակցութեամբ վերստին գումարուելով 34 Բաւելանայի բա-
ցանակ առաւելութեամբ Տե՛ր Ամենապատմական
ընտրեց եւ հուշակեց ՊԱՏՐԻԱՐԿ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԻ ԱՌՈՒՈՅՆ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ:

Ընտրութեան այս բարեյաջող արդիւնքը եւ՛ել հե-
ռադիով հաղորդեցինք Տե՛ր Ամենապատմական, ինչ-
պէս նաեւ Մայր Աթոս, Կիլիկիայ Կաթողիկոսութեան,
Կ. Պոլսոյ Պատրիարքութեան եւ արտասահմանի բոլոր
Առաջնորդութեան:

Ներկայիս ալ կր փութանք բարձրանալ հանդիսա-
նայ Միաբանութեան Երուսաղէմի ընտրութեան,
ստացան մարտնչով ի Տե՛ր Առեւտրի եւ Բաւելանայի
կեանք Տե՛ր Ամենապատմական, ի փառս Հայաստան-
եայ Ս. Եկեղեցւոյ եւ ի շնորհիւն Առաքելական
Սուրբ Աթոսոյ:

Ընտրութեան այս արդիւնքը եւ՛ել հետաձայնով ան-
միջապէս հաղորդեցինք նաեւ Տե՛ր Հայոց Կառավարու-

քեան: Պիտի փութանմի հաղորդել նաեւ պաշտօնապէս՝
խնդրելով փութացումը հորին վեճակաւորութեան թա-
գաւոր-կոյսեր բարեման հաստատութեան:

Մնամք ամենախորին յարգանքով
Պատրիարքական Տեղապան և
Նախագահ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ
ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆՆԱՆ

ՆՈՐԱՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ
ՀԵՌԱԳԻՐՆ ՈՒ ՆԱՄԱԿԸ

(Թարգմանութիւն)

17 յունիս ժամ 9.35

ՏԵՂԱՊԱՆ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարքական Հայոց

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Կը խնդրեմ ընդունել և հաղորդել Միաբ. Ընդհ. Ժողովին իմ զգածուած շնորհակալութիւններ ինձ հան-
դէպ արտայայտուած վստահութեան և համակրանքին
համար: Թող ընդունի և օրհնէ Աստուած մեր ուխտ
հանդէպ Ս. Եկեղեցիին՝ երկրպագելի Սուրբ Յակոբայ
հովանաւորութեան ձակ: ԹՈՐԿՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

(Պատմէն)

Գանիքէ, 23 յունիս 1931

Գերապաշխ

Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ԵՊՍ. ՆՇԱՆՆԱՆ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Գերապաշխ Սիրեցեալ եղբայր ի քս.

Ժամանակին օճացած եմ Ձեր Սրբազնութեան տա-
նոյ 17 քուակիւր եւ 11040-15 քուստմարտ պաշտօ-
նադիրը, եւ ճշդելիցած Պատրիարքական ընտրութեանց
շրջաւոր մանրամասնութեանց, զորս նախապէս հետա-
գրական հաղորդագրութեամբ ալ աւանդած էիք առ-
դէն մեզ:

Կ'զգամ թէ արդէն կը գտնուիմ իմ սրտիս վրայ ճնե-
ւող իրականութեան մը առջեւ, որուն մէջ — երէ օրի-
նականութեան վերջին կնիքն եւս հասնի անոր վրայ —
պիտի պարտաւորուիմ կարգաւ Աստուծոյ կամեն ինքնին:

«Քաջալերուած» իմ պատուական միաբանակից եղ-
բայս իմ սկիւր անձինս հանդէպ յայց տուած մեծ վրա-
տաւորեցնէմ, սրտապնդուած մասնաւոր ընտրութեան
լուրը հաղորդուելէն ի վեր Ազգին ամէն խաւերէն հա-
տած հաւանութեան և շնորհաւորական արտայայտու-
թիւններէն, պարտաւորուած եմ խոնարհելու նուիրական
լուծին առջեւ. որ կ'առաջարկուի ինձի:

Գիտեմ ծանոթութիւնը կատարականաստութիւննե-
րուն, զորս այդ պաշտօնը պատշաճ ինձի, բայց սէրը՝
զոր վաղուց օւնեցած եւ զոր հեզգնէէ յառանգն զգա-
ցած եմ իմ մէջս՝ պատուական հաստատութեանց վերա-
բերմամբ, եւ այն խորին համոզումը՝ թէ մեր Ս. Եկե-
ղեցիին համար կատարուելիք կենսական ծառայութեան
գործ մը կայ անոր հովանիին ձակ, կը զօրացնէմ զիս:
Ապաւինած եմ յԱստուած և լի եմ յուսով թէ
Ձեր Գեր. Սրբազնութիւնը և Պատ. Միաբանութիւնը
իւրեկց քանակաւին աջակցութեամբ զօրավիզ պիտի ըլ-
լան ինձ յամենայնի:

Կ'աղօթեմ ի խորոց սրտի որ Աստուած պանէ Ազգն
ու Հայաստանայց Ս. Եկեղեցին՝ իր նուիրականական
կարգին լուրեման մէջ — եւ Ս. Արքուդ—, Սրբոց Յա-

կորեանց Գերեմիա ուխտը հոյակապ, իր անճնաւ
միաբանութեամբ, իր հոգեւոր զպաննոցով ու աշա-
կեռներով, իր պաշտօնէութեամբ և վարձակաւորներով,
իւ ուխտաւորներով եւ բովանդակ ժողովուրդով, իր վե-
հանձն բարեարեւելով եւ բանիւ եւ զօրով անոր բար-
գաւանման հոգածու բոլոր ազգիս և բարեւէր աններով
հանդերձ:

Ընդունեցէք և Պատ. Միաբանութեան հաղորդեցէք
խորին շնորհակալութիւնս՝ իւրեկց արեւանդն շնորհա-
ւորութեանց համար, որոնց հանած էիք բարգձման լինել
սրտակցին:

Մնամ ողջունիւ եղբայրական.

Եւ սիրովն Աստուծոյ և Ազգին.

Ազօրակից Ձեզ

ԹՈՐԿՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՏՏՈՒ ԱՎԱՆ

Անգլիոյ Վեհափառ Հօռն Ս. Թագաւորին
ձնեղեան տարեդարձին առթիւ, յունիս 3-ին զոտա-
րանական պաշտամունք տեղի ունեցաւ քաղաքիս
Անգլիական Եպիսկոպոսարանի Մայր Եկեղեցւոյն մէջ:

Պատր. Տեղապան Դեր. Տ. Մեսրոպ Սրբազան
հետն ունենալով Հոգ. Տ. Կիրեղ վարդապետը, ներ-
կայ գտնուեցաւ սոյն արարողութեան, որուն մաս-
նակցեցաւ եկեղեցական զգեստաւորումով:

ՀԻՃԱԶԻ ԹԱԳԱՌՈՐ ՄԵԼԻՔ ՀԻՒՍԷՅԻՆԻ
ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

Յունիս 4-ի առաւօտեան ժամը 4-ին Ամմանի
մէջ վախճանեցաւ Հիւսէօ Նախկին Թագաւոր
Մելիք Հիւսէյին: Հանգուցելոյն մարմինը մեծ հա-
ղիստեցեամբ փոխադրուեցաւ Երուսաղէմ, ուր հա-
սաւ նոյն օրը յետ միջօրէի ժամը 2,30-ին: Հերով-
դէսի Դրան առջեւ դադարը ինքնաշարժէն հանուե-
լով ուսմարքոմ տարուեցաւ Օմարի մզկիթը՝ Դամասկոսի
Դրան ճամբով: Դազաղին կը հետեւէին հա-
ղուցելոյն որդիները՝ Ն. Վ. Էմիր Այաւալլան, Էմիր
Շարիք և Էմիր Սայիտ, Քաղաքային և զինուորա-
կան բարձրատիման պաշտօնատարներ, հոգեւոր
պետեր, Հիւսայտոսներ, և խուռներած յուզարկա-
ւորներ: Պատրիարքարանիս կողմէ ներկայ գտնուե-
ցաւ Դեր. Տ. Մկրտիչ Եպս. Աղաւունքի՝ հետն ու-
նենալով Տիօրէն Ժողովիս անդամ Հոգ. Տ. Գէորգ
Վրդ. ձանրղեանը ու Աւագ-Թարգման Հոգ. Տ. Պար-
գեւ Վրդ. Վրթանէսեանը:

Հանգուցելոյն մարմինը Օմարի մզկիթը տարուե-
լէ յետոյ՝ Թագաւորական Ընտանիքի անդամները
ընդունեցին Կառավարական Ներկայացուցիչներու,
Հոգեւոր Պետերու, Հիւսայտոսներու և այլ պաշտօ-
նական անձանց ցատակցութիւնները, որմէ յետոյ
մարմինը փոխադրուեցաւ Օմարի Մզկիթին մօտ՝
Թաշմարարի Մատրասան, և ամփոփուեցաւ իր
ընտանեկան Դամբարանին մէջ:

Ի յարգանս հանգուցեալ Թագաւորին՝ զոցուած
էին քաղաքիս խանութները, և Կառավարական
Պաշտօնատունը և Հիւսայտոսարանները սուգի զորոշ
պարգաւ էին: Ղրկուած քաղմարիւ ծաղկեպսակնե-
րուն մէջ կար նաեւ Ամմանի և Շրջակայից Հայ
Ժողովրդեան կողմէ զրկուած ծաղկեպսակը: